



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

«Ինտեգրված ուսուցման
անհրաժեշտությունը տարրական
դասարաններում»

ՀԵՂԻՆԱԿ

Գոհար Քոչարյան

ՄԱՐԶ

Լոռու մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Թեղուտի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝

Գ. Էմինյան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն-----	3
Հիմնական մաս-----	5
Եզրակացություն-----	14
Գրականության ցանկ-----	15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր Հայաստանում, ինչպես և ողջ աշխարհում, տեղի են ունենում կրթական ոլորտի փոփոխություններ, որոնց նպատակն է կրթությունը մոտեցնել իրական կյանքին: Նոր պահանջներ են առաջադրվել կրթության կազմակերպման եղանակներին ու ձևերին, նրա բովանդակությանը: Փոխվել են կրթության նպատակը, խնդիրները, ուսուցչին ներկայացվող պահանջները: Ուսուցման գործընթացում անհրաժեշտաբար ներդրվում են ուսուցման նոր տեխնոլոգիաներ, մեթոդներ, որոնց միջոցով դպրոցը պատրաստ լինի պատասխանելու ժամանակի մարտահրավերներին: Հաճախ ենք ականատես լինում դեպքերի, երբ սովորողը զինված է կայուն գիտելիքներով, սակայն անհրաժեշտության դեպքում դժվարանում է դրանք կիրառել: Դրա պատճառներից մեկն այն է, որ դպրոցում սովորողի ստացած կրթությունը խաթարում է աշխարհի ամբողջականության վերաբերյալ իր պատկերացումները:

Դեռևս վաղ տարիքից են երեխաների մեջ ձևավորվում իրենց հատուկ պատկերացումներն աշխարհի մասին: Սակայն դպրոց ընդունվելով՝ միանգամից խեղաթյուրվում է այդ ամբողջական ընկալումը, և դրվում են սահմաններ՝ առարկաների տեսքով: Դպրոցում ձեռք բերած գիտելիքը շարունակում է մնալ որպես կտրտված տեղեկոյթ՝ տարբեր ուսումնական առարկաների տեսքով, և սովորողը այդպես էլ չի կարողանում կրթական մյուս աստիճաններում դրանցից հավաքել ամբողջը: Փոխարենը ավելանում է գիտելիքի քանակական կողմը, որը հանգեցնում է մտային ավելորդ ծանրաբեռնվածության: Իսկ չէ որ կրթության նպատակն է պատրաստել լայն մտահորիզոնով քաղաքացու, որն օժտված լինի յուրացված գիտելիքները հանակարգելու և ըստ անհրաժեշտության դրանք կիրառելու կարողությամբ: Տարրական դպրոցում երեխան պետք է ունենա համակարգված և ամբողջական ընկալում բնության և նրա երևույթների վերաբերյալ: Անհրաժեշտ է, որ նա առարկան և երևույթը քննի տարբեր կողմերից՝ զգայական, գեղարվեստական, գիտական և այլն: Շարունակ փոխում է գործունեության ոլորտը, որն էլ հետաքրքիր է դարձնում աշխատանքը: Առարկաների միջև կապերն ավելի ու ավելի են սերտանում, լրացնում միմյանց ու

նպաստում երևույթի բազմակողմանի/ տարբեր առարկաների տեսքով/ դիտարկմանը և ընկալմանը:

Թեմայի արդիականությունը՝

Ժամանակակից հայ դպրոցն առանձնացված, մեկուսացված միավոր չէ և չէր կարող լինել այդպիսին: Այն իր ուսումնառության գործընթացը կազմակերպում է համաշխարհային դպրոցի փորձի ու նոր ձեռքբերումների հիման վրա: Ավանդական ուսուցման առաջավոր մեթոդների, մեթոդական եղանակների ու հնարների կողքին գործածության ոլորտ են բերվում արդիականն ու ժամանակակիցը: Զարգացնող ուսուցման մանկավարժությունը պահանջվում է ուսումնական տարբեր առարկաների՝ միմյանց մեջ ներթափանցման ուղիների մշակում: Այդ կերպ պայմաններ են ստեղծվում դասավանդման ընթացքում աշակերտների կողմից բազմաբաղադրիչ գիտելիքների ձեռքբերման համար: Համաշխարհային մանկավարժական միտքը, առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը:

Տարրական դասարաններում ուսուցման և դաստիարակության ինտեգրման խնդիրը արդիական է ինչպես տեսական, այնպես էլ գործնական առումներով:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասերել տարրական դասարաններում իրականացվող ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունը և արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրն է բացահայտել ինտեգրված ուսուցման արդյունավետությունը աշակերտների բազմակողմանի զարգացման գործում:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Ինտեգրված ուսուցումը համակարգ է, որն ընդհանրացնում, միավորում է առանձին առարկաների գիտելիքները, որի հիմքում սովորողների մոտ ձևավորվում է աշխարհի մասին ամբողջական ընկալում:

Ինտեգրված ուսուցումը նպաստում է դասերի ժամանակ ուսումնական թեմաների ավելի խոր ուսումնասիրության միջոցով սովորողների ընդհանուր զարգացմանը: Այսօր կրթության բովանդակությունը կարևորում է այս տեսակետը: Ընդհանուր թեմայի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է ցույց տալ, թե ինչպես կարելի է հնչյունի, բառի, կետի, գծի, գույնի միջոցով բացահայտել մեզ շրջապատող աշխարհի միևնույն իրավիճակը, գաղափարը կամ կերպարը: Այս դեպքում դասերի ժամանակ երեխայի ստացած առանձին գիտելիքները համակարգվում են մի ամբողջական նկար-պատկերացման մեջ, որն էլ նպաստում է իրական աշխարհի ընկալմանն ու գիտելիքների համակարգի ստեղծմանը:

Ե. Ա. Երեմինան պնդում էր, որ «ժամանակակից մանկավարժության մեջ ինտեգրված ուսուցումը ներկայացվում է նոր դիտարկումներով: Այն իր բնույթով զարգացնող է, բովանդակությամբ՝ բազմաբաղադրատարր, որը ներառում է թե զարգացման սահմանափակ հնարավորություններ ունեցող սովորողներին, թե միջառարկայական կապերի կիրառումը, թե բազմահամակազմային դասարաններում իրականացվող գործընթացը: Ինչպես նշում է Ե. Ա. Եկժանովան, « Ինտեգրված ուսուցումը, հիմնվելով հատուկ և ընդհանուր կրթության սկզբունքների վրա, պետք է ունենա զարգացնող դաստիարակող բնութագիր, որը ենթադրում է սովորողների բարոյական գաղափարների, վարքի համարժեք ձևերի մշակում է՝ բոլոր մասնակիցների ներառմամբ կրթական գործընթացում » [3, 52]:

Ինտեգրված ուսուցումը դրականորեն է ազդում երեխաների ինքնուրույնության, ճանաչողական ակտիվության, անհատական հետաքրքրությունների, տարբեր գիտությունների գիտելիքների ընդհարացման կարողությունների, մտածական գործընթացների ակտիվացման, բազմաբնույթ մտածողության ու բազմակողմանի ընդունակությունների զարգացման վրա:

Ինտեգրված կրթությունն իրականացվում է ինտեգրված թեմատիկ միավորների, ինտեգրված դասերի միջոցով: Մանկավարժության մեջ ինտեգրված

դաս ասելով հասկանում ենք դաս, որտեղ մեկ թեմայի շուրջ միավորվում են մի քանի առարկաներ:

Ինտեգրված դասերի առաջացմանը և զարգացմանը անդրադարձ է կատարվել « Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ » ձեռնարկում: Այստեղ նշվում է, որ ինտեգրված դասերի հեղինակը գերմանացի փիլիսոփա և մանկավարժ Յոհան Ֆրիդրիխ Հերբարտն էր, նրան հաջորդել է Ջոն Դյուին , Ջեյմս Բինը [2, 58]

Ինտեգրված դասապրոցեսում դասի բովանդակային, մեթոդական, կազմակերպչական գործառույթն իրենց վրա են վերցնում ուսումնական թեման ուսումնական այլ առարկաների հետ միասին:

Ուսումնական առարկայի առաջնային գաղափարները՝ հասկացությունները, օրենքները, սկզբունքները, օրինաչափությունները, տեսություններն արտահայտում են ուսումնասիրվող նյութի էությունը, հաղորդումնրան ներքին միասնություն և օրգանական ամբողջություն: Այսպիսով, առաջնային գաղափարներն ուսումնական առարկաների բովանդակության միջև կապեր են ստեղծում, դառնում այդ բովանդակության միջուկը, առանցքը, որի շուրջ տեղի է ունենում ուսումնական նյութի միավորում, խտացում(ուսումնական նյութի գիտելիքների հանգույցները միավորվում են ամբողջական համակարգում):

Ինտեգրված դասերի հենքը միջառարկայական կապերի հաստատումն է: Դրանց կարևորության մասին խոսել է նաև մանկավարժության որպես գիտության հիմնադիր Յա.Ա. Կոմենսկին իր « Մեծ դիդակտիկա» աշխատությունում: Նա նշում է, որ առարկաների միջև եղած կապը երեխաներին սովորեցնում է բացահայտել, ուսումնասիրել աշխարհը և նրա բազմազան երևույթները և , որ ամենակարևորն է, կապ ստեղծել այդ ամենի միջև [1, 293]:

Երբեմն ինտեգրված դասը այնպես է ներկայացվում, որ տարբեր առարկաների ուսումնական նյութերը ֆոն են ստեղծում հիմնական առարկայի համար: Իրական ինտեգրումը ենթադրում է բոլոր առարկաների ինքնուրույնություն, հավասարազորություն:Այդպիսի ուսուցման դեպքում ուսումնական առարկաների միջև եղած սահմանները վերանում են, որն իր հերթին նպաստում է ուսումնասիրվող նյութի ամբողջական ընկալմանը:

Յուրաքանչյուր ուսուցիչ բախվում է հետևյալ խնդրին. ինչպե՞ս իր առարկայի դասաժամին երեխաները կարողանան օգտագործել այլ առարկաներից ստացած գիտելիքները: Ուսուցիչը հստակ գիտի, որ աշխարհը միասնական է, ամեն ինչ իրար հետ կապված են ներքին կապերով: Որևէ հարց քննարկել առանց այլ հարցերի անդրադառնալու, համեմատելու, զուգորդելու, հարաբերելու, պարզապես անհնար է: Այս գաղափարն էլ հենց կազմում է ինտեգրված ուսուցման հիմքը, որտեղ տարբեր ոլորտների գիտելիքները որքան հնարավոր է միահյուսվում են ու միավորվում: Երբ ինտեգրումը դիտվում է որպես երեխաների մոտ աշխարհի մասին ամբողջական պատկերացման ձևավորում, ապա դիտարկվում է որպես ուսուցման նպատակ, իսկ երբ դիտվում է որպես գիտելիքների մերձեցման ընդհանուր պլատֆորմի ստեղծում, ապա՝ դիտարկվում է որպես ուսուցման միջոց:

Ուսուցման գործընթացում ինտեգրումն ունի հետևյալ գործառույթները.

- **Մեթոդական.** երեխաների մոտ ուսումնասիրվող առարկաների մասին ժամանակակից պատկերացումների ձևավորում,
- **Կրթակադաստիարակչական.** Ճանաչողության ըմբռնման խորություն, ճկունություն, գիտելիքների համակարգվածություն,
- **Զարգացնող.** Ճանաչողական ակտիվության ձևավորում, մտածողության քարացածության հաղթահարում, աշխարհայացքի ընդլայնում,
- **Կառուցողական.** ուսումնական նյութի բովանդակության, մեթոդների, ուսուցման կազմակերպման ձևերի կատարելագործում:

Ինտեգրումը ներկայացվում է **հորիզոնական** և **ուղղահայաց** ձևերով.

- հորիզոնական ինտեգրումը ենթադրում է տրված դասարանի դասընթացի առարկաների միավորում,
- ուղղահայաց ինտեգրումը ներառում է տարբեր տարիների դասընթացների միատեսակ թեմաները:

Բոլոր ուսումնական առարկաներն ունեն յուրօրինակ ինտեգրման պոտենցիալ: Մինչև ընդհանուր ինտեգրման ծրագիր ստեղծելը, ուսուցիչները պետք է հաշվի առնեն այն հանգամանքները, որոնք կօգնեն ինտեգրման անհրաժեշտության մասին եզրակացություններ անելու: Ցանկացած դասարանում աշակերտները տարբեր են իրենց ընկալումներով, հիշողությամբ, ուշադրությամբ, սովորելու տեմպով:

Ինքնուրույն հետազոտական աշխատանքի ժամանակ յուրաքանչյուրն ընտրում է ուսումնառության իր ձևը: Սակայն խնդիր է մնում, թե ինչպիսի հնարներով ու միջոցներով պետք է զինելաշակերտներին, որ նրանք կարողանան լուծել իրենց առջև դրված խնդիրը: Խոչընդոտ է հանդիսանում դասի սահմանափակ ժամանակը: Բացի այս ամենից, ոչ տարբեր առարկաների ուսուցիչների մասնակցությունը դասին, ոչ այդ առարկաների մեխանիկական միավորումը չեն կարող ինտեգրված դասի ցուցանիշ դառնալ: **Ինտեգրումը որոշվում է այն խնդիրների շրջանակով, որը հնարավոր է լուծել միայն ինտեգրման շնորհիվ:** Դասը կարող են անցկացնել տարբեր առարկաների ուսուցիչները միասին կամ առանձին, բայց արդյունքի կարող են հասնել միայն միավորված, համատեղ ջանքերի շնորհիվ:

Ինտեգրման շրջանակներում ուսուցիչները կարող են լուծել նաև այլ հարցեր:

Օր.՝ երբեմն նույն դասարանում աշխատող ուսուցիչները նույն հարցի վերաբերյալ իրար հակասող պահանջներ են ներկայացնում աշակերտներին: Ինտեգրման շրջանակներում նրանք կարող են նախօրոք համատեղ աշխատել, թե ինչպես կարևոր խնդիրները երկրորդականից տարանջատել, ճիշտ կառուցել բանավոր հարցերի պատասխանները, աշխատել թեստերի հետ, ձեռք բերել ինքնավերահսկման ու ինքնագնահատման կարողություններ, կատարել անդրադարձ, նախագծային աշխատանքների իրականացման ուղիները և այլ թեմաներով(տարբեր ուսումնական նյութերի, տարբեր բովանդակությունների մատուցման պայմաններում):

Ստեղծարարությունը երեխայի բնական վիճակն է: Դպրոցը երեխային դնում է որոշակի շրջանակների մեջ Նա ստեղծագործում է այն ժամանակ, երբ հանձնարարում է ուսուցիչը, ընտրում է ստեղծագործության այն տիպը, որը համապատասխանում է դասին: Ստեղծագործելուն խոչընդոտում է «թռիչքի ազատության», ազատ ընտրության ժամանակային, առարկայական սահմանափակումները և այլն:

Որպեսզի ինտեգրված դասերը դադարեն հազվադեպ, անսովոր դասեր լինելուց, անհրաժեշտ է դարձյալ վերանայել, քննարկել ընդհանուր հասկացություններն ու դրանց ձևակերպումները, ուսումնական ծրագրերն ու

դասագրքերը, առարկաների դասավանդման ժամաքանակները, թեմատիկ պլանավորումներն ու այլ խնդիրներ:

Ինտեգրացիան հանրակրթական դպրոցի տարբեր աստիճաններում ունի իր առանձնահատկությունները: Կրտսեր դպրոցում այն կոչված է ուսումնառության առաջին քայլերից երեխային աշխարհը ներկայացնել որպես միասնական ամբողջություն: Տարրական դպրոցում նպատակահարմար է ինտեգրված դասը կառուցել իրար մոտ կանգնած առարկաների շրջանակներում:

Ինտեգրված դասերին երեխաներն աշխատում են հետաքրքրությամբ, հեշտությամբ յուրացնում են ուսումնական նյութը, հնարավորություն են ստանում ստեղծագործելու և շատ երեխաների մոտ ի հայտ են գալիս ինտելեկտուալ ընդունակություններ: Հանրակրթական դպրոցի ավելի բարձր աստիճաններում նպաստում է ոչ ստանդարտ լուծումներ տալու ունակության զագացմանը և այլն: Մյուս կողմից ինտեգրված ուսուցումը գրավիչ է ուսուցիչների համար, քանի որ այն օգնում է գնահատել երեխաների գիտելիքներն ու հմտությունները, ավելի լավ հասկանալ նրան, մղում է որոնելու ուսուցման նորարական ձևեր ու մեթոդներ:

Ինտեգրված ուսուցումը ստեղծագործական լայն հնարավորություններ է ստեղծում նաև մեթոդիստների, հոգեբանների, բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում և կարողանում են աշխատել, ովքեր կարողանում են հասկանալ այսօրվա երեխային, նրանց հարցերն ու հետաքրքրությունները, ովքեր սիրում ու նվիրվում են նրանց:

Առարկայի ինքնուրույնությունը, պարփակվածությունը, առարկաների միջև թույլ կապերի առկայությունը խաթարում է աշխարհի ամբողջական պատկերն ընկալելու հնարավորությունը: Ինտեգրված դասերը նպաստում են աշխարհի ամբողջական պատկերի ձևավորմանը, բնության, հասարակության մեջ տեղի ունեցող երևույթների միջև կապերի բացահայտմանն ու ընկալմանը: Ինտեգրումը հենց գիտական կապերի մերձեցման գործընթաց է, որն ուղեկցվում է տարբերակված ուսուցմամբ: Ինտեգրման գործընթացը միջառարկայական կապերի բարձրագույն ձև է և ուսուցման որակապես նոր աստիճան:

Ինտեգրումը հնարավորություն է տալիս աշակերտին ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, առաջացնում է հետաքրքրություն ուսման նկատմամբ, բարձրացնում է

նրա իմացական կարողությունների մակարդակը: Տարրական դասարաններում ինտեգրման գործընթացն ունի իր առանձնահատկությունները և հիմնականում կրում է կոլեկտիվ բնույթ՝ <ամեն ինչից քիչ-քիչ>:

Երեխաները ուսուցման վաղ շրջանում ծանոթանում են շատ հասկացությունների, երևույթների, առարկաների, սակայն դրանց մասին ունենում են տարրական պատկերացումներ: Ուսումնառության ընթացքում այդ պատկերացումների շրջանակը ընդարձակվում է: Նրանք ստանում են նորանոր գիտելիքներ՝ լրացնելով իրենց իմացածը: Այստեղ է, որ առաջ է գալիս ինտեգրված դասերի հիմնական դժվարությունը, քանի որ հարկավոր է պահպանել ցանկացած թեմայի դինամիկ զարգացումը՝ սկսած մատուցումից մինչև ամրապնդում: Ինտեգրված դասերն իրենց հերթին հնարավորություն են տալիս ուսուցչին կրճատել որոշ թեմաների ուսուցման ժամկետները, բացառել տարբեր առարկաներից կրկնվող նյութերը, կոնկրետ նպատակի ցելնելով՝ մեծ ուշադրություն դարձնել այն թեմաներին, որոնք անհրաժեշտ է համարում ուսուցիչը:

Ինտեգրված դասերը թուլացնում են աշակերտների լարվածությունը, հանում են ձանձրույթը, քանի որ նրանք մի գործունեության ձևից անցնում են մեկ այլ գործունեության: Ինտեգրման հիմնական և պարտադիր պայմաններից է աշակերտների ինքնագործունեության դերի բարձրացումը, քանի որ ինտեգրումը մյուս առարկաների հաշվին լրացնում է ուսումնասիրվող նյութի թեմատիկան, առաջ է բերում երևույթների ավելի խոր վերլուծության և ընդհանրացման: Ուսուցչից պահանջվում է լրացուցիչ պատրաստվածություն, բարձր ինտելեկտ, մանկավարժական վարպետություն:

Ինտեգրված դասերը լավ է նկարագրել Ե. Ա. Երեմինան՝ գրելով, որ ինտեգրված դասերի շնորհիվ միավորվում են մեկ թեմայի նվիրված տարբեր առարկաների գիտելիքների բլոկներ: Ուստի շատ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրված դասի նպատակը [3, 20]:

Ինտեգրված դասեր կազմակերպելիս հարկավոր է հաշվի առնել՝

-դասի նպատակը/ կարող է անհրաժեշտություն լինել կրճատելու թեմային հատկացված ժամաքանակը, սովորողների գիտելիքների հետ առաջացած դժվարությունները և այլն/

-նյութի ընտրություն/ անհրաժեշտ տեղեկություն, որը կծառայի դասի նպատակին/
-համակարգող գործոնի որոշում/տարբեր առարկաների տեղեկույթի միավորում՝
ընդհանուր հիմքի վրա/
-դասընթացի նոր կառուցվածք իստեղծում/գիտելիքների համակարգում
ֆունկցիոնալ փոփոխություններ
-բովանդակության մշակում/ հին ձևերի վերացում, համակարգում, էլեմենտների
միջև նոր կապերի ստեղծում/:

Կարևոր է նաև, որուսուցիչն իմանա, թե երբ և որ առարկաները կարելի է
ինտեգրել, որպեսզի արդյունքն ակնհայտ լինի: Ինտեգրված դասի
առանձնահատկությունն այն է, որ այդ դասերը կառուցվում են մեկ առարկայի հիմքի
վրա, որն էլ գլխավորն է համարվում: Մյուսները նրան ինտեգրվում են՝ օգնելով
ավելի ընդարձակ ուսումնասիրել գլխավոր առարկայի կապերը, խորը հասկանալու
սումնասիրվող առարկայի էությունը, հասկանալ կապը առօրյա կյանքի հետ և
հնարավորություն ունենալ ստացած գիտելիքները գործնականում կիրառելու:

Տարրական դասարաններում ինտեգրված ուսուցման հիմքը բազմաբնույթ
մտածողությունն է, որի կիրառումը խթանում է երեխաների գործնական
կարողությունների զարգացմանը:

Ինտեգրված ուսուցման գլխավոր մաս է համարվում թեմատիկ միավորը: Այն
դասավանդման նպատակներով գաղափարները և գիտելիքները մեկ իմաստալից
կառույցի մեջ միավորող պլան է, առարկայական կամ ինտեգրված դասընթացի
ամբողջական ծրագիր է, որը կարող է տարբեր լինել իր ծավալով և նպատակներով:
Թեմատիկ միավորը շատ կարևոր միջոց է, որը զարգացնում է ուսուցչի
ստեղծագործական կարողությունները, տեսական և գործնական հմտությունները,
ձևավորում ուսուցիչ-աշակերտ գործարար համագործակցությունը, նպաստում
արտադասարանական և դաստիարակչական աշխատանքների
արդյունավետության բարձրացմանը, ըստ աշակերտների կարողությունների՝
շերտավորված ուսուցման իրականացմանը: Թեմատիկ միավոր ստեղծելիս պետք է
որոշել միավորի տիրույթը, այսինքն՝ «ինչը որքան» պետք է սովորեցնել: Հարկավոր է
հաշվի առնել նաև թեմայում ներառված տեղեկատվության հաջորդականությունն ու
շարունակականությունը: Ինտեգրվող նյութը կապել սովորողի անձնական փորձին ու

միջավայրին, օգնել աշակերտին ստեղծելու իմաստալից պատկեր և հաստատել միջառարկայական կապերը:

Ինտեգրված դասերի կազմակերպումն ու անցկացումը կրտսեր դպրոցում ուսուցման բարեփոխմանն ու կատարելագործման նոր ուղղություններից մեկն է: Ինտեգրված դասի կառուցվածքը սովորական դասից տարբերվում է հետևյալ առանձնահատկություններով.

- Հստակությամբ, ուսումնական նյութի սեղմությամբ,
- Տրամաբանական փոխապայմանավորվածությամբ,
- Ուսումնական նյութի տեղեկատվական մեծ տարողությամբ:

Նման դասերի պլանավորման համար ուսուցիչը նկատի է ունենալու հետևյալ պայմանները.

- Ինտեգրված դասին միավորվում են տարբեր առարկաների գիտելիքներ:

Այստեղից էլ պետք է որոշել ինտեգրված դասի գլխավոր նպատակը:

- Եթե որոշված է ընդհանուր նպատակը, ապա առարկաների

բովանդակությունից ընտրվում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են դրա իրականացման համար:

Ինտեգրված դասի պլանավորման ժամանակ պետք է հստակ ընտրել դասի տեսակը, կառուցվածքը, ուսուցման մեթոդները, ինչպես նաև որոշել սովորողների բարեհարմար ծանրաբեռնվածությունը՝ գործունեության տարբեր ձևերով:

Բովանդակալից և նպատակաուղղված ինտեգրված դասերը՝

- դպրոցական ուսուցման ավանդական կառուցվածքի մեջ ներմուծում են

նորոյթ,

- նպաստում են աշխարհի գիտական պատկերի ամբողջական ձևավորմանը,
- հնարավորություն են տալիս առարկան կամ երևույթը զննել մի քանի

կողմերից՝ տեսական, գործնական, կիրառական,

- հնարավորություն են տալիս համակարգել գիտելիքները,
- զարգացնում են սովորողների բանավոր և գրավոր խոսքը,
- նպաստում են սովորողների երևակայության, հիշողության, ուշադրության,

մտածողության (տրամաբանական, գեղարվեստական-պատկերավոր, ստեղծագործական) առավել զարգացմանը:

Ինտեգրված թեմատիկ միավորը շատ կարևոր միջոց է, որը

- զարգացնում է ուսուցչի ստեղծագործական կարողությունները,
- զարգացնում է ուսուցիչների տեսական և գործնական հմտությունները,
- ձևավորում և զարգացնում է ուսուցիչների ստեղծագործական խմբերը,
- զարգացնում է ուսուցիչ-աշակերտ համագործակցային խմբերի աշխատանքը,
- պլանավորում, կազմակերպում և իրականացնում է աշակերտների

բազմապիսի արտադասարանական-դաստիարակչական աշխատանքների ծրագրերը,

- աշակերտների կարողություններին համապատասխան կազմակերպում է

ուսուցումը:

Տարրական դպրոցում միջառարկայական համակարգի իրականացման համար հնարավոր է երկու մոտեցում.

1. Թեմատիկ մոտեցում, միջառարկայական իմացական խնդիրների, պրոբլեմային հարցերի, առաջադրանքների կատարման համար ուղղորդող մտքերի օգտագործում:

2. Ընդարձակ պրոբլեմային մոտեցում, տարբեր ուսումնական առարկաների համար ընդհանուր միջառարկայական հիմնահարցերի առաջադրում և դրանց ընթացիկ լուծում:

Միավորման սկզբունքով ուսումնական նյութի ընտրությունը և ձևավորումը թույլ է տալիս անցնել կրթության՝ գիտական ոլորտից գործնական ոլորտ: Վերջապես՝ դասընթացների ինտեգրման մեթոդիկական արդյունավետ ճանապարհ է կրթության առաջին օղակի կատարելագործման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ինտեգրված ուսուցումը հնարավորություն է տալիս հասնել ուսուցման ավելի բարձր նպատակների իրականացմանը և արդյունավետության բարձրացմանը: Դրանք են՝ ստացած գիտելիքները նոր իրավիճակներում կիրառելու կարողությունները, նոր գիտելիքների որոնման և յուրացման համար համապատասխան շարժառիթների ձևավորումը և, վերջապես, գիտական համակարգվածությունը, որը հիմք է գիտական վերլուծության համար:

Ուսումնական ծրագրի ինտեգրումը 'երկնքից իջած' նորամուծություն չէ, սրանում հնից պահպանված շատ բան կա, սակայն ցավոք ինչպես հաճախ լինում է կյանքում, մարդիկ հնից կառչելով, դիմադրում են նորին ոչ թե այն պատճառով, որ չեն ընդունում այն, այլ որովհետև սովոր են հնին և չեն ուզում այն կորցնել: Սակայն տարիների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մանկավարժության մեջ նորամուծությունները հիմնականում կատարվում են ավելի շատ արդեն եղածին նորն ավելացնելով, քան թե եղածը դուրս մղելով:

Եթե ուսուցիչը ինքը չձգտի փոփոխությունների, ապա նրա համար շատ դժվար կլինի աշխատել փոփոխություններին ավելի արագ արձագանքող ու հարմարվող աշակերտների հետ: Նույնիսկ դժվար կլինի աշխատել այսօր ստեղծված ինտեգրված դասագրքերով:

Ինտեգրացումն օգնում է աշակերտին կապակցելու տարբեր առարկաներից ստացված տվյալները, հասկացությունները, գործողություններն ու գիտելիքները՝ խուսափելու համար 'ուսումնական ծրագրի մասնատումից' և հավասարակշռելու առաջադրանքները:

Գիտելիքի և հմտությունների ձեռքբերումն ու ինտեգրումը դեռ ինտեգրացված ուսումնական ծրագրի վերջը չէ: Այն պետք է պլանավորի ու ներդնի ուսուցման համակարգ, որն է՝ ուսուցումը, որպեսզի աշակերտը հասնի արդյունքների:

Այսպիսով՝ ինտեգրված ուսուցումը միտված է աշակերտների բազմակողմանի զարգացմանը: Քանի որ նմանատիպ դասերի ընթացքում աշակերտները պարբերաբար սկսում են կապ հաստատել տարբեր առարկաների երևույթների հասկացությունների միջև: Նրանք սկսում են աշխարհը դիտարկել որպես մեկ ամբողջություն, ինչը հենց ինտեգրված դասերի գաղափարախոսությունն է

Օգտագործված գրականություն

1. Արշակյան Ս. Դ. « Միջառարկայական կապերը տեխնոլոգիայի դասաժամին», Երևան 2014, 299 էջ
2. Դավթյան Մ. , Գրիգորյան Ք, Առնաուդյան Ա., Վարդումյան Ս., Օհանովա Ի. «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ /ձեռնարկ ուսուցիչների համար/ Երևան 2007 336 էջ
3. Երեմինա Ե. Интегрированный урок - одно из новшеств современной методики /<https://nsportal.ru/shkola/inostrannye-yazyki/library/2012/03/31/vystuplenie-integrirovannyy-urok-odno-iz-novshestv>
4. Հասարակագիտության ուսուցման արդի հիմնահարցեր, Ձեռնարկ ուսուցիչների համար, Այոեքս, Երևան, 2005 128 էջ
5. Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա., Ս., Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ). Երևան 2005, 455 էջ
6. Նախաշավիղ 1, 2012 , 66 էջ
7. Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, Այոեքս, էջ 319